EYE REPORT

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԼՐԱԳՐՈՒԹՅԱՆ ՀՄՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՄԵԴԻԱ ՁԵՎԱՉԱՓԵՐԻ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ ՏԱՎՈՒՇՈՒՄ

մրցույթի հայտարարություն

«Տավուշում կրթական-տեղեկատվական դասընթացների ծրագրի» շրջանակում ստեղծված «Ամերիկյան գրադարան և դասընթացների կենտրոն»-ը հայտարարում է մրցույթ **«EyeReport** երիտասարդական սոցիալական մեդիա ալիք» նախագծին մասնակցելու համար:

Ծրագիրն իրականացնում է «ՓԻ-ԷՅՉ Ինթերնեշնլ» կազմակերպության (www.ph-int.org) հայկական մասնաճյուղը՝ ՀՀ-ում ԱՄՆ պետքարտուղարության Հանրային դիվանագիտության գրասենյակի ֆինանսավորմամբ:

ՁԱՓԱՆԻՇՆԵՐ

Մրցույթին կարող են դիմել Տավուշի մարզից **20-29** տարեկան այն երիտասարդները, որոնք.

- պարտաճանաչ են և ծրագրի ընթացքում (2023թ. հունիս - 2024թ մայիս) չեն բացակայի իրենց համայնքից, կմասնակցեն ծրագրով նախատեսված միջոցառումներին,
- կարծում են, որ փոփոխությունների ու զարգացման կարելի է հասնել մեդիայի և քաղաքացիական հասարակության ակտիվ համագործակցությամբ,
- համոզված են, որ տեղեկատվության այլընտրանքային աղբյուրներով կարող են ներկայացնել իրենց ասելիքն ու կարծիքը՝ ի լրումն հիմնական լրահոսի,
- հետաքրքրված են նոր մեդիա գործիքներով և հմտություններով,
- ունեն ստեղծագործ, նորարար ծրագրեր իրականացնելու գաղափարներ ու ցանկություն,
- պատրաստ են կատարել թիմային աշխատանք, առաջադրանքներ, հաղթահարել մարտահրավերներ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ծրագիրը կմեկնարկի 2023 թ. ամռանը և կավարտվի 2024 թ. մայիսին: Մրցութային հանձնաժողովը, ըստ ներկայացրած հայտերի, կընտրի 15 երիտասարդների:

Նրանց սպասում է հետաքրքիր փորձառություն.

- հագեցած քառօրյա դասընթաց «Քաղաքացիական լրագրություն» թեմայով,
- համատեղ աշխատանք՝ օգտագործելով Կենտրոնի տրամադրած սարքավորումներն ու մեդիա գործիքները,
- սեփական սմարթ հեռախոսներով և համակարգիչներով մեդիա արտադրանքի ստեղծում,
- սոցիալական ցանցերում այլընտրանքային բովանդակության, փոդքսթների, տեսանյութերի ստեղծում, որոնք կանդրադառնան համայնքային խնդիրներին:

Ծրագրին պարտադիր մասնակցած երիտասարդները կստանան վկայականներ ՀՀ-ում ԱՄՆ դեսպանատան և «Փի-Էյչ» Ինթերնեշնլ» կազմակերպության կողմից:

ԺԱՄԿԵՏՆԵՐ

Դիմորդներն ընտրվելու են **2** փուլով.

Ցանկացողները պետք է մինչև **2023**թ. փետրվարի **10**-ը լրացնեն հայտը հետևյալ հղումով՝ **https://forms.gle/VkcXme4pRCA21Gjd8** :

Կքննարկվեն միայն պատշաճ կերպով լրացված և ժամանակին հանձնված հայտերը:

Հայտերը գնահատելուց հետո հանձնաժողովը առավել բարձր միավորներ հավաքած դիմորդներին կհրավիրի հարցազրույցի՝ նախապես հայտնելով տեղն ու ժամը:

Երկու փուլերի միավորների հանրագումարով կընտրվեն այն **15** դիմորդները, որոնք կներգրավվեն ծրագրում:

Ամփոփիչ արդյունքները կհրապարակվեն մինչև **2023**թ. մարտի **31**-ը:

ՀԱՐՑԵՐ

Երկուշաբթի-ուրբաթ ժամը **9:30-18:30** կարող եք դիմել Ծրագրի ղեկավար Քրիստինե Ճգնավորյանին: Հեռ. **(094) 41 42 36**, էլ. փոստ՝ **christine.chgnavoryan@ph-int.org**